



«ԹՈՂ ՏՈՒԷՐ ՄԱՆԵՐ ՏՂՈՅՔ ՈՐ ԻՆՅՈՒ ԳԱՆ» : ԴՈՒԿ. ԺԸ. 16 :

Հ Ա Տ Ո Ր Գ .

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ . ՍԵՊՏԵՄԲԵՐ 1 . 1875 .

Թիի 9



ԱՐՄԵՆԱԿԱՑ ՓՈՐՉՈՒԹԻՒՆԸ

«Երանի թէ չափահաս մարդ եղած ըլլայի», բառ Արմենակ օր մը էր հօրը :

Հայրն անոր հարցուց. «Ինչո՞ւ այդպիսի բան մը կ'ուզես» Արմենակ պատասխանեց . «Վասն զի չափահաս մարդիկ իրենց ուղածին պէս կը շարժին» Այո,» բառ հայրը, «թէ և անոնք իրենց ուղածին պէս կը շար-

ժին, սակայն պարտաւոր են նաև իրենց զաւակաց պարէնը ճարելու համար աշխատել, և այնպիսի փորձութիւններ ունին, զորս դու ամենևին չես դիտեր :

«Աղէկ, բայց ես կ'ուզեմ չափահաս մարդ մ'ըլլալ որ ստակ չահիմ, և սատանայի դէմ կուռելով անոր ամէն փորձութեանցը յաղթեմ», բառ Արմենակ : Այս խօսքին

վրայ անոր հայրն ալ բան մը չբառաւ : Ժամ մ'ետքը Արմենակ սենեակ մը մտաւ, ուր անոր փոքրիկ քոյրը Վերգինէ բազմոցի վրայ պառկած կը քնանար : Արմենակ չէր գիտեր թէ իր քոյրն հոն էր, բայց երբ զայն տեսաւ, ուղեց դուրս ելլել զանի շարժնցնելու համար : Բայց մէկէն բան մը տեսնելով կանկ առաւ : Վերգինէ իր խաղալիկներուն քով կը քնանար. իր պաճուճապատանքը (դեղեմ), փիղը և ձին քոյն էին, սակայն Արմենակ մեծ ու կարմիր Ամասիոյ խնձոր մը տեսնելով իր քնացող քրոջ կտր և գէր ձեռքերուն մէջ, կանկ առած էր : Մէկէն մտածեց Արմենակ որ եթէ այն խնձորն առնէր, մէկը չլիտի դիտար զայն, և գրեթէ գեռ իր ընկերին վրայ չխորհած, գնաց կամացուկ մը բազմոցին վրայէն խնձորն առաւ ու սենեկէն դուրս ելաւ : Սրահին մէջ մարդ չկար. բայց Արմենակ այնպէս զգաց թէ բազմութեամբ լեցուն էր այն, և ամէնքն ալ իր վրայ նայելով, «Ամօթ, ամօթ» կ'ըսէին : Անոր խիղճն էր որ այնպէս կը յանդիմանէր զանի : Բայց ան վազեց դուրս, իբր թէ զինքը կշամբող ձայնէն փախչիլ կարելի էր. սակայն այն ձայնը զանի կը հալածէր անոր յիշեցնելով թէ որչափ պիտի վշտանար Վերգինէ, երբ արթննարով չտեսնէր խնձորը : Արմենակ վազելով մինչև պարտեզին միւս ծայրը գնաց, և որպէս զի խիղճը զանի աւելի չվրդովէր, պահուրտեցաւ մացառի մը ետին ու կերաւ խնձորը, բայց այնչափ արագ կերաւ որ բնաւ համ չառաւ : Երբ խնձորը կերաւ լմացուց, իր հանդերձին թեղանկրովը բերնին ջուրը սրբեց : Արմենակ սկսաւ մտածել

Թէ գողցուած խնձորն անոր խղճին պատճառած վրդովումը չէր արժեքը, Բոլոր այն օրը շատ անհանգիստ էր, մինչև որ երեկոյին իր հօրն ու մօրը խոստովանեցաւ բոլոր եղելութիւնը: Այն ատեն հայրն ըսաւ Արմենակայ, թէ սատանային դէմ կուռելու և անոր մարդոց առջև հանած փորձութեանց յաղթելու համար չափահաս ըլլալու սպասել հարկ չէր. և ազօթեց Աստուծոյ Արմենակայ օգնել այսպիսի տղայական փորձութեանց դէմ դնելու, որպէսզի չափահաս ըլլալէն ետքն ալ չափահաս մարդու փորձութեանցը յաղթելու և դիմադրելու պատրաստ ըլլար:

Գայ իւր հօրեղբոր գիրկը կը հանդչի: Միրելի տղայք, աշխարհ նման է այն մամուխի ծառին որ իւր պտուղները գեղեցիկ կը ցուցնէ, բայց եթէ մէկը անոնցմէ մէկ քանի հատ ուտելու ըլլայ, ախորժակը աւելի կը զրգուռի, զոր եթէ չափաւորէ, հետեանքը կործանում կ'ըլլայ: Աստուած ամէն մարդոց կ'ըսէ, «Նայեցէ՛ք, ինչպէս զգուշութեամբ պիտի քալէք»: Եւ այսպիսիները կը խրատէ ըսելով. «Դարձէ՛ք ձեր չար ճամբաներէն, վասն զի ինչո՞ւ կորսուիք»: «Խրատ մտիկ ընողը կենաց ճամբուն մէջ է:»

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ՎԱՐՓԱՊԵՏՆԵՐՈՒՆ ՀԱՏՈՒՅՈՒՄ

Ձեր կիրակնօրեայ դպրոցի վարժապետին կիրակիէ կիրակի ձեզի դաս տալը մեծ բարեբարութիւն է: Անոր այս մարդասիրութեանն ինչպէս հատուցում պիտի ընէք:

1. Ամէն կիրակի ճիշդ ժամանակին դասի երթալով: Վարժապետը շատ կը տրամի, երբ կը տեսնէ որ աշակերտներն ուշ կու գան:
2. Դասի ատեն հանդարտ և ուշադիր ըլլալով:
3. Դասերը ըստ սովորով:
4. Ամէն շաբաթ Սուրբ գրոց գիտութեանը մէջ անելու և զփոքանալու ջանակով:
5. Բոլոր շաբթուան մէջ կիրակի օր տրուած դասերուն համաձայն վարուելու աշխատելով:

Եթէ այս բաները կ'ընէք, այնպէս դո՛ւ կ'ընէք ձեր կիրակնօրեայ դպրոցի վարժապետը, որպէս թէ անոր առատ ստակ տուած ըլլայիք:

ՅՈՎԱԿԻՄԻ

ԱՂՕԹԵԼՈՒ ԿԱՆՈՆԸ

Առաւօտ մը Հռուսի մայրն հարցուց թէ, դիչեր ատեն իր վրայ ունեցած խնամոց համար Աստուծմէ շնորհակալ եղաւ: «Ոչ մայրիկս» ըսաւ աղջիկը. «Գիտեմ թէ ինչպէս ըսել պէտք է առաւօտեան աղօթք մը:» «Կը փափագիմ որ հիմա ինձ սորվեցնես:»

Մայրը սկսաւ անոր սորվեցնել թէ գիշերուան մը հանգստութեան համար ինչպէս շնորհակալութիւն պէտք է մատուցանել: Անդին Հռուսի փոքրիկ եղբայրը Յովակիմ ըսաւ. «Հռուսի, երբ բանի մը պէտք ունենաս, մօրմէս խնդրելու կերպը չե՞ս գիտեր»:

«Այո, գիտեմ» ըսաւ Հռուսի: «Աղէկ, երբ մայրս ուղածդ տայ, անկէ շնորհակալ ըլլալու կերպը չե՞ս գիտեր»:

«Այո, գիտեմ ինչպէս շնորհակալ ըլլալ պէտք է»: «Լաւ ուրբեմն», ըսաւ Յովակիմ, «Տէրովը գիմելու ճամբան ալ այդ է: Ինչ բանի որ պէտք ունիս խնդրէ

Տղայոց Աւետարեթի համար

ԽՐԱՏԸ ԼՍԷ

Տիգրան պարտէզ կ'երթայ, և մամուխի ծառին տակ կեցած անոր պրտուղը կը նետէ: Կ'ուզէ քանի մը հատ փրցնել և ուտել: Մէկ երկու հատ ուտելով ախորժակն ալ աւելի կը զրգուռի և կը թելադրուի ծառը ելլել, և ելլելով կը տեսնէ որ վերի ճիւղերուն վրայ աւելի գեղեցիկ և հասուններ կան. կը ջանայ այն տեղերն ալ ելլել, և ահա ոտքին տակի ճիւղը կը կտորի: Տիգրան անկէ վար կ'իջնայ. բարեբախտաբար ուրիշ ճիւղ մը հանդիպելով երկու թևերէն կախուած կը մնայ: Տիգրանայ բարե-



ԹՐԸՄՓ

Թրըմփ կը կոչենք մենք այն շնիկը, զոր օր մ'եզրայրս իր գրպանին մէջ դրած մեր տունը բերաւ: Այս շնիկը մեծնալով ձեր այս պատկերին մէջ տեսած մեծ շունն եղաւ: Այս թրըմփին հոս ինչ գործ կը տեսնէ: Եուն մը պզտիկ Բամպուկը խածնել կ'ուզէր, թրըմփ զայն անոր դէմ կը պայտապանէ: Պզտիկ Բամպուկն թրըմփի տակը մտաւ բորբոքին ապահով ըլլալու համար: Աղէկ է որ թրըմփ այս շնիկը պաշտպանէ: Ալ աւելի աղէկ է որ աղայք այս կանանը մտքերնին պահեն:

Միշտ օգնեցէք տկարաց երբ ձեր օգնութեան կարօտ են, և միշտ զգոյշ եղիք որ անօգնական եղող տկարները չըրկէք:

կամներէն միոյն ամուսինը նոյն պարտէզին մէջ գանուելով անոր օգնել կը փութայ, սակայն չի կրնար պէտք եղած օգնութիւնն անոր հասցնել: Հաւուն (տէտէին) խանութը այն կողմերն էր, և Տիգրան բոլոր ուժովը կ'սկսի օգնութեան կանչել իր հաւը որպէս զի լսէ և գայ: Տիգրանայ հօրեղբայրներէն մին վաղեց եկաւ և Տիգրանայ վտանգաւոր վիճակը տեսնելով փութաց անոր օգնելու, սակայն այն ճիւղը, որմէ Տիգրան կախուած էր, կարող չէր ուրիշ ծանրութեան մ'ալ դիմանալու. ուստի օգնութեան եկողը վախցաւ ծառն ելլել, խորհեցաւ որ եթէ Տիգրան սիրտ առնուր և վար նետուէր, ինք կրնար գայն բռնել: Տիգրան դժուարաւ կը համոզուի ճիւղը թող տալ. վերջապէս ինքզինք վար կը նետէ և դրբելով կու

անկէ, և երբ խնդիրքդ տայ, շնորհակալ եղիր անկէ, ինչպէս կ'ըլլաս ևս մօրմէդ» :

Այդ էր Յովակիմի աղօթելու կանոնը: Ասկէ լաւագոյն կերպ մ'ալ գիտցող կայ :



ԾՈՅԼ ՊԱՐՍՍԾ

Պարսամ առանց իր դասը սորվելու, ամբողջ վրայ նստած, զրբէն զատ ուրիշ ամէն բանի կը նայի, իր դասն ուրիշ ատենի կը թողու, և երբ ինք դեռ իր դասը չտեսած գեղերը վրայ հասնի, կ'ըսէ. «Հոգ չէ. վաղը կը սորվիմ»: Պարսամին այսպէս իր դործը վաղուան ձգելն ինչու աղէկ չէ. վասն զի վաղն իր գործը իր հետ կը բերէ, և մենք չենք գիտեր թէ վաղն ինչ արդեւորներ պիտի երևան դասն որ գործը խափանեն: Տղայք, ծոյլ մ'ըլլաք, ժրպան կ'ըլլէք. ամէն օր ինչ գործ որ ունիք նոյն օրը կատարեցէք, ձեր ժամանակը պարսպ մի վասնէք: Խաղալու ատեն խաղացէք, բայց աշխատելու ատեն ալ աշխատեցէք. և այսպէս ամէն օր քանի մը բան կատարած պիտի ըլլաք, որուն հաշիւը պիտի տաք, եթէ Տէրը վաղուընէն առաջ զձեզ իրեն կանչէ:

« ԱՐԹԻՆՄԱՐԹԻՆ »

Կուսինէ տիկինը երկու պզտիկ տղաք ունէր երկուքն ալ միևնոյն հասակով, մէկուն անունը Յարութիւն, միւսինը՝ Մարթինոս: Ասոնք այնպէս իրարու կը նմանէին որ, դրացիք չկրնարով զանոնք դիւրաւ իրարմէ ուրշել, սովոր էին անոնց ամէն մէկուն երկու անունը մէկէն տալով ըսել Արթինմարթին:

Երբ այս տղայք քաղելունոր սկսան, գրեթէ միշտ կ'իյնային, իրենց որո-

ւանին վրայ, կը գլորեին, կամ իրենց գլուխներն իրարու կը զարնէին. Կուսինէ տիկինը խորհեցաւ որ այսպիսի ատեններ անոնց լայը դադրեցնելու ամենէն աղէկ եղանակն էր լայը համրոյրի դարձնել: Ասոր պատճառն յայտնի է. Լալու ատեն բերանը կը բացուի, համրուելու ատեն կը գոցուի: Կուսինէ տիկին շատ համարեղ կին էր: Խորհեցաւ որ անոնց բերանը գոցելը լայը դադրեցնել էր, և անոնց բերանը գոցելու համար անոնց զիրար համրուել տալու միջոցը գտաւ: Տղոց լայը լսելուն պէս զանոնք մէկտեղ բերելով կը հրամայէր որ փաթթուելով իրար գրկեն, և ետքը կ'ըսէր, «Արթին, Մարթինը պագ, Մարթին, դուն ալ Արթինը պագ»:

Այս երկու տղոց իրարու դիմաց երթալով և արտասուալից աչօք իրար գրկելով իրենց ծած շրթունքները գոցել և այնպէս իրար համրուելու ատենը արգարե խնտալու արժանի էր:

ԱՉԲ

1. Աչքի վրայ տեղեկութիւն ունիք, եթէ անգամ մը զգուշութեամբ ձեր մէկ ընկերով աչքին նայիք, պիտի տեսնէք թէ ինչ կայ անոր մէջ: Նախ աչքին կողմը կան որ աչքը կը ծածկեն և կը պահպանեն քնոյ ժամանակ: Կողմըն եղերքը կան արտահանուրը կուտամ մագրը, որ փոշոյն չեն թողուր աչքին վնասելու, և այս պաշտօնն այնպէս աղէկ կը կատարեն որ հազիւ երբէք փոշոյ հաս մը կրնայ միջոց դասն աչքին մէջը թափանցելու:

2. Աչքին կողմըն տակ կը տեսնէք աչքին սպիտակուցը (սերմակը) որ գնդակ մըն է և աղէկ տեսնելու համար ամէն հարկաւոր բան իր մէջ կը պարունակէ: Եթէ խնամով նայիք այս գնդակին, պիտի տեսնէք անոր ճերմակին վրայ բարակ բարակ կարմիր գիծեր որ աչքին անդեմանը համար հարկաւոր արեւըր տանող երակներն են: Գնդակին ճակատը պատուհան մը կայ զոր կրնաք տեսնել: Այս պատուհանէն ներս նայելով պիտի տեսնէք բոլորակ սև ծակ մը որ աչքին բէքը կը կոչուի, և որուն մէջէն լոյսը կը թափանցէ աչքին ներսի կողմը: Հոս բան մը կայ որուն կ'ու-

զեմ որ խնամով միտ դնէք: Աչքին բերբ միշտ կը փոփէ գերբ: Եթէ ձեր ընկերն իրիկուան դեմ աղօտ, այսինքն քիչ լոյս ունեցող, տեղ մը տանելով աչքին մէջ նայիք, անոր աչքին բերբ լայնացած պիտի տեսնէք: Բայց եթէ յանկարծ անոր աչքին առջև ճրագ մը դնէք, պիտի տեսնէք որ անոր աչքին բերբ երթալով կը նեղնայ: Ըսել է թէ լուսոյն համեմատ կը փոփուի բերբը պատու վարագոյրը (սերմ) որուն պաշտօնն է աչքին մէջ մտնելու լոյսը կառավարել: Եթէ լոյսը շատ պայծառ է վարագոյրը կ'ամփոփէ բերբը, այսինքն այն բոլորակ սև ծակը. և եթէ լոյսը շատ նուազ է, վարագոյրը կ'ընդլայնի, որպէս զի ծակն ընդարձակուի: Ոմանց աչքին վարագոյրը սև է, ոմանցը կապոյտ, ուրիշներունը շագանակագոյն, ոմանցն ալ կանանչ: Այս գոյնին նայելով կ'ըսենք, Այս ինչ մարդը սևաչուի է, կամ կապուտաչուի է: Եթէ մարդ մտաւ դպցնէ աչքին, ցաւ կը զգայ, քանզի աչքը փափկագոյն է քան թէ մատին մարմը: Բայց կողմըրը շարունակ շարժելով աչքին կը քուտին, և մարդ ցաւ չիմանար: Պատճառը սա է որ, աչքին կողմըն մարմը շատ փափուկ է, և կողմըն տակ փոքրիկ պարկ մը կայ որ շարունակ ջրի նիւթ մը դուրս տալով թայ կը պահէ կողմըն և աչքին մէջտեղը, այնպէս որ կողմըրը միշտ կակուղ կը մնան: Բայց ասկէ, աչքին կողմըն այնպէս շինուած են որ իւղային նիւթ մը դուրս կուտան իրենց ծայրերը, և այս իւղային նիւթը չի թողուր այն ջրի նիւթին աչքէն դուրս վազել: Միայն երբ մարդ կու լայ, այն ջրի նիւթը շտանալով կը վազէ: Աչքին տակի կողմը պզտիկ խողովակ կամ փող մը կայ որ քթին մէջ կ'երթայ, և այս խողովակէն աչքին աւերըղ շուրջը վազէ դուրս Գիտէք որ, երբ կու լաք, ձեր քթին կը սկսի շուրջ վազել: Աչքին ներսի կողմը, բերբն անդին է աչքին սերմակը կուտամ մտոր, աչքին ետքն ալ ցանցաբոլոր որ ջիղերէ կազմուած է, և որուն վրայ բերբն անցնող լոյսը կը նկարէ աչքէն տեսնուած առարկաներուն պատկերները: Բայց առանց պատկերի այս բանը ձեզի հասկցնել դժուարին է, ուստի ասոր վրայ ուրիշ անգամ կը խօսինք:

ԿԵՍ ՀԱՄՈՂՈՒՄ

«Քիչ մնաց որ զիս համոզես Քրիստոնեայ ըլլալու»:

ԳՈՐԾ. ԻԶ. 28:

1. Կէս համոզուած ես հա - ա - ա - լու. Կէս համոզուած Քրիս - տոս սի - րե - լու.

Միտքը ը - սել կու - գայ, «Հոգի, առ այժմ գընա. երթամանակ գընեմ, Քեզ կը կան - չեմ»:

2

Կէս համոզուած դու, մի ուշանար.
Մեծ հրաւիրմանն անհոգ մի ըլլար.
Կանչողն Փրկիչըդ է.
Մերով քեզի կ'ըսէ,
« Հանգիստ կու տամ քեզի,
Եկուր ինձի »:

3

Կէս համոզուած դու, հունձը կ'անցնի.
Շուտ քու վճիռդ պիտի կնքուի.
Չըլլայ որ ետ մընաս,
Եւ ետքը դառն ողբաս,
« Ոհ, ոհ, կէս համոզուած,
Բայց կորսուած »:



ՊՕՃԷՍՄԱՆՔ

Ափրիկէի հարաւային կողմը բնակող վայրենի ցեղի մը այս անունը կը տրուի: Սոյն ցեղը աշխարհի ամենէն քիչ քաղաքակրթուած և թերևս ամենէն աղէկ ցեղն է: Այս ցեղի մարդիկ կարճահասակ են. թէև իրենց շուրջը գտնուողները սեւ են, բայց ասոնք գեղնադոյն են: Բերանին շատ մեծ է, աչքերնին շատ փոքր, քթերնին ալ տափակ է. գլուխնին ճաղատ, որուն վրայ հոս հոն բուրդի

նման փոքրիկ փունջեր ցրուած կը գտնուին: Սոյն պատկերը այն ցեղէն կին մը և իր զուակը կը ցուցնէ: Անոնք անձաւներու և երկրի ծակերու մէջ կ'ապրին. ոչ իշխան, ոչ օրէնք և ոչ ընտանիք ունին: Անոնց կերակուրը հում միս է. արդարև անանոց շատ կը նմանին, և ուրիշ մարդոց հետ թշնամութեամբ կ'ապրին: Գիշեր ատեն իրենց երկրէն դուրս կ'ելլեն, և անասուններ կը քշեն կը տանին, ետքն անանոց տէրերն անոնց ետեւէն ինտրով հրացան կը պարպեն վրանին: Անոնց ուրիշ ժողովրդոց հետ ունեցած յարաբերութիւնը միայն կուռի յարաբերութիւն է: Ընկուզի կեղեւներուն ոտքի տակ կոխկրտուած ատեն հանած ձայնին նման է անոնց խօսիլը: Լեզուին արեգական տակ գտնուած ուրիշ լեզուի մը չնմանիր: Աշխարհի վրայ միայն այս ժողովրդոց միսիօնարներ զրկել ջանալն անօգուտ կ'երևի: Ասուած այս ժողովուրդն ինչո՞ւ այսպէս ըրած է. անոնք ուստի՞ առաջ եկած են. ո՞վ են. միշտ պարապ տեղ այս հարցումները կ'ըլլան այս ժողովրդեան վրայով:

ՀԱՐՑԱՆՅ ՊՕՏԱՍԻՍՆԵՐ

- Թիւ. 4. Բ Մայ. ԻԶ. 21: — 5. Երեմիա ԺԷ. 11:
- 6. Երեմիա Ը. 7: — 7. Յոր. ԼԹ. 19-25:
- 8. Եզեկ. ԻԲ. 27:

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ



ՆՀԱՅՐ ու անմայր էի, բայց թագաւորին աղջիկն անկողինս պատրաստած էր: Թէև թագաւորի մը պալատան մէջ էի, չտեսայ երբէք մարդոց ձեռքով շինուած տուն մը:

Համբ էի, բայց թագաւոր մը խաբեցի: Թագաւորին զինուորներն եկան զիս սպաննելու, բայց չկրցան, թէև անօգնական անոնց ձեռքն ինկած էի:

Մեծ թագաւոր մը մահուանէ ազատեցի. և դարձեալ մարդէ մը վարձք չառի, և ոչ քաղցր խօսք մը լսեցի:

Մէկը չգիտեր իմ անունս. բայց և այնպէս ամէն Սուրբ գիրք կարդացող տղայք իմ վրայովս լսած են:

Այս հանելուկին համապատասխանող Սուրբ գրոց պատմութիւնն ամենէն աղէկ գրող տղան, եթէ 16 տարեկանէն վար ըլլայ, 1876ին այս թերթը ձրի պիտի ընդունի:

Ամէն պատասխանները պէտք է որ հոս հասնին դեկտեմբերի 1ին, և զրոյնքն իրենց տարիքն, անունը և բնակութեան տեղն իմացնելու են: Ամենէն աղէկ պատասխանը տղայոց Աւետարեթի դեկտեմբերի թուոյն մէջ պիտի հրատարակուի:

Փոքրիկ տղայ մը տեսնելով որ երկու թռչնիկ բոյնի մը մէջ զիւրար կը կոցէին, հարցուց, «Ի՞նչ կ'ընեն»
Ըսուեցաւ, «Կուռի կ'ընեն»:

«Ո՛հ, ոչ» ըսաւ տղան, «այդ շիտակ չէ. անոնք եղբայր են, ինչպէս կ'ընայ ըլլալ որ իրարու հետ կուռին»:

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն
Խմբագիր ձ. Բ. Կրին

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
Ձագմագըլար, Յակոբեան խան, Թիւ. 12.